


Փարիզյան հանդիպումներ

20.12.2010 10:02



2010թ. Դեկտեմբերի 10-ին Փարիզի փաստաբանների պալատում տեղի ունեցավ Փարիզի փաստաբանների պալատի նախագահի տեղակալ պարոն Ժան-Իվ Լը Բոնի և ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ պարոն Ռուբեն Սահակյանի հանդիպումը, որն ավարտվեց ընթրիքով: Հանդիպմանը ներկա էին նաև Փարիզի փաստաբանների պալատի խորհրդի անդամ պարոն Վինսենտ Նյուոռեն և ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի խորհրդական, Եվրոպական հաստատություններում պալատի ներկայացուցիչ Րաֆֆի Գալֆայանը: Կողմերը մտքեր փոխանակեցին փաստաբանությանը հուզող արդի հարցերի շուրջ, պայմանավորվածություններ ձեռք բերվեցին առաջիկա համատեղ միջոցառումների մասին: Կողմերը պայմանավորվեցին նաև, որ 2011թ. գարնանը Հայաստան կայցելի ֆրանսիացի փաստաբաններից կազմված պատվիրակություն:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })